Նախագծային աշխատանք

Թեմա՝	<< Եղիշե Չարենցի անցած ուղին>>
Առարկաներ՝	<<Գրականություն>>, <<Հայոց պատմություն>>
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2023-24 ուստարի, 1-ին կիսամյակ
Դասարան՝	7-րդ
Տևողություն՝	01.11-08.12.23թ.
Վերջնաժամկետ՝	15.12.23թ
Տեսակը՝	միջառարկայական
Չևաչափը՝	թիմային

Հայոց պատմության ուսուցչուհի՝ **Միլվա Սմբատյան**

Նախագծի նպատակները՝

. Ձևավորել գիտելիքներ Արևմտյան Հայաստանի պատմական վայրերի մասին , որտեղ եղել է Ե.Չարենցը :

.Թվարկել այն հայտնի վայրերը, որտեղ եղել է Չարենցը

. Իմանա Վան,Տրապիզոն, Կ.Պոլիս, Աթենք, Հռոմ, Վենետիկ, Փարիզ, Բեռլին քաղաքների մասին

. Արժևորել մայր հայրենիքի դերը հայ մարդու, հայ հանճարի կյանքում:

. Ձևավորել համագործակցային և սոցիալական հմտություններ:

Նախագծի վերջնարդյունքները՝

Աշակերտը կկարողանա՝

. Ներկայացնի գրողի շրջագայությունը Արևմտյան Հայաստանից, Թիֆլիսից մինչև արտասահման

. Ներկայացնի Վան,Հռոմ,Վենետիկ, Բեռլին, Փարիզ,Աթենք քաղաքների հիմնադրման պատմությունը, և այդ քաղաքներին բնորոշ առանձնահատկությունները

. կազմի անցած ուղու յուրօրինակ քարտեզ:

. ստեղծի սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած դարաշրջանի ուշագրավ փաստեր, և այն պատմական վայրերը, որտեղ եղել է Չարենցը:

. Գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ:

Նախագծի նկարագիրը՝

Պատկերացրե՛ք, որ դուք ուզում եք լինել այն վայրերում, որտեղ եղել է Եղիշե Չարենցը՝ սկսած իր ծննդավայր Կարսից մինչև արտասահման և Արևելյան Հայաստան: Եվ Չարենցի անցած ուղու հիման վրա կազմեք մի յուրահատուկ քարտեզ՝ տվյալ քաղաքին կամ վայրին բնորոշ կառույցով, և կազմեք սահիկաշար:

Առաջնորդվեք հետևյալ ուղղորդումներով.

. Թիմով կազմելու եք քարտեզ և սահիկաշար:

. Քարտեզը պետք է ունենա համապատասխան ձևավորում և նկարազարդումներ:

. Քարտեզի բովանդակությունը պետք է ուղղված լինի այն տեղանքին, որը ներկայացնելու եք:

. Սահիկաշարով պետք է ներկայացվեն գրողի կյանքի հիմնական դրվագները, ստեղծագործական ուղին և ժամանակաշրջանի ուշագրավ փաստերը:

Աշակերտների ինքնուրույն հետազոտական գործունեությունը

Փուլ I - Աշակերտների ձայնի և ընտրության իրավունք

Ուսուցիչները աշակերտներին ներկայացնում են նախագծի նկարագիրը, բացատրում են թե ինչ պետք է անեն այս նախագծի շրջանակում:

Ուսուցիչները ձևավորում են 6 - հոգանոց խումբ և խմբի աշակերտներին հնարավորություն են տալիս խմբում ընտրել իրենց դերը՝

Խմբի ավագ – պատասխանատու է քարտեզի և սահիկաշարի ողջ բովանդակության, նյութերի ճշտության և ճշգրտության համար:

Նկարիչ-ձևավորողներ-պատասխանատու են քարտեզի ձևավորման, պատկերազարդման,գույների համար:

Գրական նյութերի համակարգող-պատասխանատու է Չարենցի կյանքի և ստեղծագործության մասին ընտրված նյութերի համար:

Պատմական նյութերի համակարգող-պատասխանատու է Չարենցին և նրա ապրած ժամանակաշրջանին առնչվող պատմական նյութերի համար:

Սահիկաշար կազմող-պատասխանատու է սահիկաշարի ողջ բովանդակության համար:

Յուրաքանչյուր աշակերտ խմբում պատասխանատու է և՛ իր ստանձնած դերի համար, և՛ խմբի միասնական աշխատանքի համար:

Փուլ II - Հետազոտություն

Աշակերտներն ուսումնասիրում են Չարենցի կյանքը՝ դասագրքի, այլ գրքերի և համացանցի նյութերի հիման վրա, դուրս են գրում տեղեկությունները, առանձնացնում են վայրերը, որտեղ եղել է Չարենցը:

Փուլ III – Տվյալների մշակում

Տարբեր աղբյուրներից հավաքած տեղեկույթը, փաստերը համադրում են, առանձնացնում էականները, ապա առանձնացնում են գրականն ու պատմականը, որոշում են Չարենցի հետ առնչվող տեղանքի ամենահայտնի կառույցը:

Փուլ IV - Անդրադարձ

Աշակերտները խորհրդատվական հանդիպում են ունենում ուսուցիչների հետ՝ նրանց ներկայացնելով իրենց աշխատանքը և ստանալով հետադարձ կապ ուսուցիչներից:

Փուլ V-Վերանայում

Ուսուցիչների տրված հետադարձ կապից հետո խմբի անդամները վերանայում են իրենց աշխատանքը, կատարում են անհրաժեշտ փոփոխություններ: Խմբի անդամները որոշում են, թե ինչպիսին պետք է լինի քարտեզի ձևավորումը, ինչպիսի նկարազարդումներ, գունազարդումներ են անելու, ինչպիսի նկարներ են տեղադրելու թե՛ քարտեզի վրա, թե՛ սահիկաշարում:

Փուլ-VI -Վերանայում

ՈՒսուցիչները վերջնական դիտողություններն են անում և նախապատրաստում աշակերտներին՝ աշխատանքի հանրային ներկայացման :

Փուլ VII- Հանրային ներկայացում

Խմբի անդամները հերթով ներկայացնում են Չարենցի կյանքի մի հատվածը՝ օգտագործելով քարտեզը: Ապա ներկայացնում են պատմական նյութերը: Ներկայացվում է նաև սահիկաշարը: Աշակերտները արտասանում են բանաստեղծի <<Ես իմ անուշ Հայաստանի>>, <<Հայրենիքում>>, <<Տաղ անձնական>> բանաստեղծությունները, ներկայացնում մեծերի՝<<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությանը տրված գնահատականները: Բացատրում են նաև <<Չարենց>> գրական անունը:

Ժամանակացույց

Խմբի անդամներ	Դերեր	Խորհրդատվական հանդիպումների օրեր
Աղաբեկյան Մելինե	գրական նյութի համակարգող	նոյեմբերի 3
Ասատրյան Դավիթ	նկարիչ-ձևավորող	նոյեմբերի 10
Բախշյան Մանե	սահիկաշար կազմող	նոյեմբերի 17
Գրիգորյան Միլենա	պատմական նյութի համակարգող	նոյեմբերի 24
Խաչատրյան Նարեկ	խմբի ավագ	դեկտեմբերի 1
Հակոբյան Միլենա	նկարիչ-ձևավորող	դեկտեմբերի 8

Գնահատման չափանիշներ

Բովանդակություն՝ 50 մ

Քարտեզի կազմում, ձևավորում-20 մ

ստույգություն – 10

առկա նկարները համապատասխանում են նյութին – 5մ

պատկերազարդումներ, գույների համադրում-5մ

Սահիկաշար – 10 մ

նյութի համապատասխանություն – 5

ստեղծագործական մոտեցում – 5

Գրագիտություն – 5

Ներկայացում – 15

բանավոր խոսքը փաստարկված է, տրամաբանված, գրագետ-10

ասմունք – 5